# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 411

**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ, «ԲԼԵՍԿ» ՍՊԸ կոնսորցիումի միջև 19.06.2025թ. կնքված N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱՇՁԲ-2025/2 ծածկագրով «Կապալային աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան «20» 04 2026 թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի գործադիր տնօրեն **Սարգիս Բաղինյանի**, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), և **«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ, «ԲԼԵՍԿ» ՍՊԸ կոնսորցիումը**, ի դեմս **«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ**-ի տնօրեն՝ **Գ.Մկրտչյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, ի դեմս **«ԲԼԵՍԿ» ՍՊԸ**-ի հ/մ-ի տնօրեն՝ **Վ.Մարտիրոսյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՏԶՀ ԾԻԿ վարչության զեկուցագիրը և Կողմերի միջև **19.06.2025թ. կնքված ՀՀ Արարատի մարզի «Դիմիտրովի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արարատի մարզի «Այգեստանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արարատի մարզի «Դվինի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կառուցման աշխատանքների պետական գնման N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱՇՁԲ-2025/2** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 3.1.9-րդ, 3.3.3-րդ, 8.5-րդ և 8.17 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի կատարման 1-ին փուլի համար սահմանված ժամկետի ընթացքը **2025 թվականի օգոստոսի 21-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 17-ը համարել կասեցված՝ ՀՀ Արարատի մարզի «Դիմիտրովի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի մասով:**

2. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի հաշվարկը համարել վերսկսված **2025 թվականի դեկտեմբերի 18-ից** և **1-ին փուլի ավարտի ժամկետը համարել 2026 թվականի մարտի 18-ը:**

3. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

4.Սույն Համաձայնագրում չնշված` Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

5. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով` 3 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| --- | --- | --- |
| **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ** | **«ՇԱՀԱՐՏ» ՍՊԸ** | **«ԲԼԵՍԿ» ՍՊԸ Հ/մ** |
| Հասցեն` ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե` ՀՀ, Արարատի մարզ ք. Արտաշատ Երևան – Երասխ մայրուղի թիվ 40 | Հասցե` ՀՀ, ք. Երևան, Ազատության պող. 24/12. |
| ՀՎՀՀ` 00846441 | ՀՎՀՀ` 04210867 | ՀՎՀՀ` 00447068 |
| Գանձապետական հաշիվ 1` 900011058758<br>Գանձապետական հաշիվ 2` 900011058766<br>Գանձապետական հաշիվ 3` 900011058774<br>Կենտրոնական գանձապետարան | Հ/հ` 220013332816000<br>Բանկ` «Ակբա Բանկ» ԲԲԸ<br>Արարատ մ/ճ | Հ/հ` 220250123753000<br>Բանկ` «Ակբա Բանկ» ԲԲԸ<br>Մալաթիա մ/ճ |
| Գործադիր տնօրեն` **Ս.Բաղինյան** | Տնօրեն` **Գ.Մկրտչյան** | Տնօրեն` **Վ.Մարտիրոսյան** |
| /ստորագրություն/<br>Կ.Տ. | /ստորագրություն/<br>Կ.Տ. | /ստորագրություն/<br>Կ.Տ. |

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **ՀՀ Արարատի մարզի «Դիմիտրովի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արարատի մարզի «Այգեստանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի, ՀՀ Արարատի մարզի «Դվինի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի կառուցման»** աշխատանքների նպատակով կազմակերպված **N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱՇՁԲ-2025/2** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **19.06.2025 թ.** կնքված **N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱՇՁԲ-2025/2** պայմանագրում 20.04.2026 թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ՝ | Ժամկետների կասեցման և վերսկսման հիմքի առկայությունը և 1-ին փուլի ժամկետի ավարտի սահմանման առկայությունը |
| Փոփոխության նկարագրություն՝ | Կասեցվել և վերսկսվել է պայմանագրային ժամկետների հոսքը և 1-ին փուլի ժամկետի ավարտ է սահմանվել |
| Փոփոխության հիմնավորում՝ | Պայմանագրի 3.1.9, 3.3.3, 8.5 և 8.17 կետերը |

**Պատվիրատու՝Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ**

## ОБЪЯВЛЕНИЕ
**об изменениях, внесенных в заключенный договор**

Армянский фонд территориального развития ниже представляет краткую информацию об изменениях, внесенных 20.04.2026 года в договор **N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱՇՁԲ-2025/2** заключенный **19.06.2025 года** в результате процедуры закупки под кодом **N ՀՏԶՀ-ԱԲՄ-ԱՇՁԲ-2025/2** организованной с целью приобретения Строительных работ для своих нужд, и копию утвержденного в двухстороннем порядке документа, содержащего внесенное изменение.

| | |
|---|---|
| Причина возникновения изменения: | Наличие оснований для приостановления и возобновления сроков и наличие определения окончания срока 1-го этапа |
| Описание изменения: | Процесс заключения контрактов был приостановлен и возобновлен, а также установлена дата завершения первого этапа. |
| Обоснование изменения: | Пункты 3.1.9, 3.3.3, 8.5 и 8.17 договора |

**Заказчик: Армянский фонд территориального развития**